ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՐԻ ՄԵՆՏԻԿՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՁՆԻՒ ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՄԵՆՏԻԿԵԱՆ, ՈՐ Ի ՄԻԼԱՆ, ԻՏԱԼԻԱ

Մեծազնիւ Տիկին Մենտիկեան,

Համազգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Տասնամեակներ շարունակ բազում յանձնառութիւններով ու կատարած բարերարութիւններով Դուք գործուն մասնակցութիւն էք բերում Իտալիոյ հայ համայնքի ազգային-եկեղեցական կեանքին: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին առաւել շէն ու պայծառ տեսնելու նախանձախնդրութիւնը եւ նուիրաբերումի ոգին, որ ժառանգել էք Ձեր հաւատաւոր ու եկեղեցասէր ծնողներից, արժանիօրէն սէր ու յարգանք են բերել Ձեզ Իտալահայ համայնքում:

Գոհունակութեամբ Մեր բարձր գնահատանքն ենք բերում Ձեզ՝ հանդէպ Հայրենի մեր Երկիրն ու համայն մեր ժողովրդի հոգեւոր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրսեւորած Ձեր ջերմ զգացումների ու որդիական սիրոյ եւ մատուցած ծառայութիւնների համար: Տակաւին Վազգէն Ա. եւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսների գահակալութեան տարիներին կատարած ազնիւ բարերարութիւններով Դուք մեծապէս նպաստել էք Աստուածկառոյց Մայր Աթոռիս շինութեանն ու պայծառութեանը, Մայր Հայրենիքում հոգեւոր կեանքի վերազարթօնքին: Ձեր ազնիւ նուիրաբերութեամբ տարիներ առաջ նորոգուեց ու բարեզարդուեց Երեւանի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին եւ նոր շքեղութեամբ իր

դռները բացեց հաւատաւոր հայորդեաց առջեւ, ովքեր անկեղծ երախտագիտութեամբ ու բարեմաղթանքներով այսօր յիշում են եկեղեցաշէն բարերարիդ:

Մեծազնիւ Տիկին Մենտիկեան, սիրով ընդառաջելով Միլանի Եկեղեցական Վարչութեան, ինչպէս նաեւ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նագգաշեանի խնդրանքին եւ բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ եկեղեցասէր ու ազգանուէր նոյն ոգով պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնները բերել մեր Սուրբ Եկեղեցուն, յամենայնի աջակից լինելով Իրալիոյ հայոց հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Առէն աբեղայ Շահինեանին:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը Սուրբ Ներսէս Շնորհալու բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջութիւն, երջանիկ կեանքի երկար օրեր եւ ազգանուէր ու եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 27-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 333